



ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ իրավաբանական անձանց ցպահանջ ավանդի

Ք. _____

"__" _____ 20 թ.

«Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Բանկ», ի դեմս _____

որը գործում է կանոնադրության /լիազորագրի/ հիման վրա, մի կողմից և _____

այսուհետ՝ «Ավանդատու», որը գործում է _____

մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Բանկը, ընդունելով Ավանդատուից ստացված կամ վերջինիս համար ստացված դրամական գումարը, այսուհետ՝ «Ցպահանջ ավանդ», իրավունք վերապահելով Ավանդատուին ավելացնելու Ավանդի գումարը, պարտավորվում է Ավանդատուին առաջին իսկ պահանջով վերադարձնել Ցպահանջ ավանդի գումարը՝ ավելացված ավանդի գումարով, և սույն Պայմանագրով նախատեսված պայմաններով ու կարգով տոկոսներ վճարել դրանցից:

1.2. Ավանդի գումարը և արժույթը՝ _____ (գումարը թվերով և տառերով)

1.3. Ավանդի տոկոսադրույթը՝ _____ տարեկան: (տոկոսադրույթը թվերով և տառերով)

1.4. Ավանդատուից առնվազն 10 օր անընդմեջ 5 մլն ՀՀ դրամից և դրան համարժեք արտարժույթից ավել ներգրավված Ցպահանջ ավանդի դիմաց վճարվում է տարեկան 1 (մեկ) տոկոս, մնացած դեպքերում վճարվում է սույն պայմանագրի 1.3. կետում նշված տոկոսադրույթը

1.5. Ավանդային գործառնությունների կատարման համար Բանկն Ավանդատուի համար բացում է թիվ _____ ավանդային հաշիվը:

1.6. Ավանդի տոկոսները վճարվում են յուրաքանչյուր եռամսյակի վերջին աշխատանքային օրը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. *Բանկը* պարտավորվում է վերադարձնել *Ավանդատուին* Ավանդը այն դրամական միավորով, որով ներգրավված է եղել: Հաշվարկված տոկոսները Ավանդատուին վճարվում են ՀՀ դրամով:

2.2. Ավանդի գումարը կարող է լրացվել պայմանագրի գործողության ընթացքում:

2.3. Բանկի կողմից Ցպահանջ ավանդի համար վճարվող տոկոսների չափը նվազեցնելու դեպքում տոկոսների նոր չափը կիրառվում է Բանկի կողմից սահմանված օրվանից: Տոկոսների նոր չափի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է հանրապետական մամուլում:

2.4. Պայմանագրի գործողության ընթացքում և հետագայում պահպանվում է Ավանդատուի և Ավանդի գաղտնիությունը, տեղեկությունները տրվում են միայն օրենքով սահմանված կարգով:

2.5. Ավանդային հաշվի տնօրինման իրավունքը այլ անձի կարող է փոխանցվել օրենքով սահմանված կարգով հաստատված լիազորագրով:

2.6. Ավանդի ներդրումն ու ավելացումը հավաստվում է բանկային փաստաթղթով (չեկով, փճարման հանձնարարականով, մեմորեալ օրդերով, այլ վճարային գործիքով), առանց որի սույն պայմանագիրը առոչինչ է, և Բանկի կողմից տրամադրված քաղվածքով: Վերջինս տրամադրվում է Ավանդատուին ոչ ուշ, քան ավանդային հաշվի վրա Ավանդի գումարի մուտքագրմանը հաջորդող բանկային օրը: Բանկի և Հանձնադրողի միջև ձեռք բերված համաձայնության հիման վրա քաղվածքը տրամադրվում է՝

- առձեռն
- փոստի միջոցով _____ /հասցե/
- էլեկտրոնային կապի միջոցով _____ /e-mail/

2.6.1. Ավանդային հաշվից ելքագրումների իրականացման դեպքում հաճախորդին տրամադրվում է քաղվածք՝ 2.6 կետով սահմանված պայմաններով:

2.7. Բանկային ավանդի գումարի վրա տոկոսներն հավելագրվում են Ավանդը բանկ մուտք լինելուն հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:

2.8. Այն դեպքում, երբ Ավանդատուն չի պահանջում հաշվարկված տոկոսները, դրանք ավելանում են Ավանդի գումարին, որի նկատմամբ կատարվում է հետագա տոկոսների հավելագրումը:

2.9. Եթե Ավանդը Բանկում ներդրվում է արտարժույթով, ապա Ավանդատուն սույն պայմանագրի ստորագրման և/կամ կնքման փաստով հավաստում է, որ նա գիտակցում է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով առաջացող հնարավոր անբարենպաստ հետևանքները, և նախընտրում է Ավանդը ներդնել արտարժույթով:

2.10. ՀՀ օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում կատարվող փոփոխությունները, որոնց գործողությունը տարածվում է սույն ավանդային պայմանագրի վրա, ենթակա են պարտադիր կատարման, և կողմերը պարտավորվում են ղեկավարվել կատարված փոփոխություններով:

2.11. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

2.12. Ավանդատուն հավաստում է, որ մինչև Պայմանագրի ստորագրումը նախօրոք ծանոթացել է Բանկի կողմից ավանդների ընդունման կարգի դրույթներին և նրանում նշված բոլոր նմուշներին, որոնք փակցված են իրենց համար տեսանելի տեղերում և լիովին ընդունում է Պայմանագրով ամրագրված պայմանները

2.13. Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ Ավանդատուին վճարվելիք տոկոսագումարից իրականացնում է գանձում՝ համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի:

ԲԱՆԿ

Հասցե _____

Հեռախոս _____

/ստորագրություն/

ԱՎԱՆԴԱՏՈՒ

Հասցե _____

Հեռախոս _____

/ստորագրություն/